

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 23-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

- | | |
|--------------|--|
| Գ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Հ. Թովմասյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |
| Կ. Մինասյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Հ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ |
| Կ. Արեյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Ն. Երիցյան | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ |

Հրավիրվածներ՝

- | | |
|-----------------|--|
| Վ. Հովհաննիսյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Հ. Մարգարյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Վ. Գաբրիելյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար |
| Վ. Տերտերյան | ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ |
| Լ. Հունանյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Վ. Նիկոյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Վ. Միրումյան | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ |

Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Վ. Կոխյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար
Ա. Սարգսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար
Ք. Ղալեյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան
Ս. Ղազարյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի իրավաբան, պայմանագրերի կառավարման մասնագետ

1. Տրանշ 2-ի արտաքին ֆինանսական աուդիտի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների հաստատում

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Տրանշ 2-ի արտաքին ֆինանսական աուդիտի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար Ա. Սարգսյանին՝ 750 միավորի շեմն անցած՝ «Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի և «Սոս-Աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին հրավիրել ֆինանսական առաջարկների հրապարակային բացմանը:

2. Գնումների ընթացքում ներկայացված հայտերը և (կամ) գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների կազմավորման վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Հ. Թովմասյան, Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ գնահատող հանձնաժողովի ձևավորման առաջարկին և ծրագրի գնումների պլանով նախատեսված 1,000.000 ԱՄՆ դոլար և ավել արժողությամբ աշխատանքների ու 500,000 ԱՄՆ դոլար և ավել արժողությամբ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերի համար հաստատել մշտապես գործող հանձնաժողովի կազմը՝ դրանում ընդգրկելով՝

1) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ) Հրանտ Բեգլարյանին,

2) ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյանին,

3) ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ռուզաննա Ալավերդյանին,

4) ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբելյանին,

5) ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն Էդգար Ավետյանին,

6) ՀՀ վարչապետի խորհրդական Գևորգ Մալխասյանին,

7) Հայաստանի Ամերիկյան համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի դեկան Արամ Հաջյանին,

8) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար Արթուր Սարգսյանին,

9) անկախ փորձագետ Ալեն Ամիրխանյանին:

3. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի կարողությունների ընդլայնման միջոցառումների վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Վ. Գաբրիելյան, Լ. Հունանյան, Ն. Երիցյան, Կ. Մինասյան, Գ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար Ա. Սարգսյանին՝

1) օրակարգի 3-րդ հարցի վերնագիրը համապատասխանեցնել ներկայացված հարցի բովանդակությանը.

2) հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը, առաջիկա կառավարման խորհրդի նիստին ներկայացնելով դրույքաչափերը, Տրանշ 3-ի շրջանակներում կառավարման խորհրդատու չվարձելու արդյունքում տնտեսված միջոցների ծախսման ուղղությունները, ինչպես նաև համապատասխան հաշվարկ հիմնավորումները:

3) առաջիկա կառավարման խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կարողությունների ձևավորման միջոցառումների ծրագիր:

4. Տրանշ 3-ի շինարարության վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և շուրջ 60կմ ճանապարհահատվածի վերջնական նախագծման ու վերջնական նախագծի հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքի հիմնական դրույթների հաստատում

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հավանություն տալ Տրանշ 3-ի շինարարության վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և շուրջ 60 կմ ճանապարհահատվածի վերջնական նախագծման ու վերջնական նախագծի հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքի հիմնական դրույթներին:

5. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի ամփոփ բյուջեների և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի 2013 թվականի պահպանման ծախսերի հաստատում

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2013 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի ամփոփ բյուջեները:

6. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների և դրանց տեխնիկական հսկողության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ և ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի հունիսի 1-ի N 11/1 «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի

իրագործման շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացի օրինականության ու արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ հաշվետվության հետ կապված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության դիրքորոշման և պարզաբանումների նախագծի մասին

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար Ա. Սարգսյանին՝ առաջիկա կառավարման խորհրդի նիստի քննարկմանը աղյուսակի տեսքով ներկայացնել տեղեկատվություն՝ նշելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների և դրանց տեխնիկական հսկողության ընթացքում առաջացած խնդիրները և ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությամբ արձանագրված խախտումները, դրանց վերաբերյալ պարզաբանումները և բացատրությունները, ինչպես նաև արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

7. Տրանշ 3-ի շինարարական աշխատանքներին խոչընդոտող հաղորդողիների (գազ, ջուր, էլեկտրաէներգիա և կապ) տեղափոխման վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանի, ՀՀ արդարադատության նախարար Ը. Թովմասյանի, ՀՀ քաղաքաշինության նախարար Ս. Թադևոսյանի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ ուսումնասիրել ծրագրի հաղորդողիների և այլ կառույցների տեղափոխման հարցը և առաջիկա կառավարման խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել առաջարկություն:

8. Երևան-Աշտարակ ավտոճանապարհի կմ 18+370 կմ 29+773 հատվածի համար ՀՀ կառավարության 06.08.2009 թվականի N 968-Ա որոշմամբ նախատեսված սահմանափակումներից բացառություն սահմանելու վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Գ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց մերժել Երևան-Աշտարակ ավտոճանապարհի կմ 18+370 կմ 29+773 հատվածում ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի N 968-Ա որոշման 1-ին կետով կիրառած սահմանափակումը վերացնելու առաջարկը:

9. ՀՀ Կոտայքի մարզի Պոռշյան համայնքի համար գյուղտեխնիկայի նոր անցման կառուցվածքի վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց.

1) մերժել ՀՀ Կոտայքի մարզի Պոռշյան համայնքի ղեկավարի և այլ համայնքների կողմից ներկայացված նմանատիպ առաջարկները.

2) հանձնարարել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար Ա. Սարգսյանին՝ ապահովել Տրանշ 3-ով շրջանակներում տեխնիկական ինժեներական աուդիտի իրականացումը (անցուղիների, այդ թվում վերգետնյա, ճամփաբաժանների և այլն) և տալ կառուցվող արագընթաց ճանապարհի՝ միջազգային նորմերով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ եզրակացություն:

10. «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի շրջանակներում՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տրամադրված ֆինանսական օժանդակությամբ Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետում նոր կամրջի կառուցման և հին կամրջի պահպանման խնդրի վերաբերյալ

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն, որ Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետում նոր կամրջի շինարարության ավարտից հետո կպահպանվի Բագրատաշենի հին կամուրջը:

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝ սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատական ներկայացնել համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ըստ որի Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրված վարկային համաձայնագրով նախատեսված Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում Հայաստանի և Վրաստանի

միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման բաղադրիչի իրականացման, այդ թվում աշխատանքների, ապրանքների, ծառայությունների գնումները համակարգելու, կառավարելու, վերահսկելու և գնահատելու իրավասությունները կվերապահվեն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

11. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1) (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագրի շրջանակներում անցկացված առողիտորական ծառայությունների մատուցման մրցույթի արդյունքների և կնքվող պայմանագրի հաստատում

(Ս. Ղազարյան, Վ. Հովհաննիսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում անցկացված առողիտորական ծառայությունների մատուցման մրցույթի արդյունքները:

12. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրության մասին

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Հավանություն տալ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Արթուր Սարգսյանին «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակելու առաջարկին:

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին՝

ա. իրականացնել համապատասխան աշխատանքներ, որպես առաջնահերթություն, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ում կարողությունների ձևավորման (ինքնուրույնաբար նախագծման, կառուցման, վերահսկման և այլ գործընթացների իրականացման) և զարգացման ուղղությամբ.

բ. արդյունավետ կազմակերպել կապալառուների հետ համատեղ աշխատանքը (հսպանական կազմակերպության կողմից ենթակապալառու ընկերությունների ընտրության սկզբունքը, որակի նկատմամբ հսկողության իրականացման մեխանիզմները և այլն) և ըստ անհրաժեշտության ներկայացնել առաջացող հավանական խնդիրները,

գ. խորհրդի անդամներին պարբերաբար ներկայացնել կառուցվող ճանապարհի առարկայական ներկայացումներ՝ մասնավորապես, անվտանգության կանոնները պահպանելու նպատակով կառուցվող մետաղական արգելափակոցների ու ճամփաբաժանների որակական հատկանիշների ընտրության, միջազգային նորմերին համապատասխանող՝ խոշոր եղջերավոր կենդանիներ տեղափոխելու համար նախատեսված վերգետնյա և ստորգետնյա անցումների, վթարները կանխելու, ռիսկերը գնահատելու մասով, ինչպես նաև մասնագետների կարծիքն այն մասին, որ ՀՀ-ն ընտրել է ճանապարհ կառուցելու լավագույն լուծումները, որոնք համապատասխանում են միջազգային նորմերով սահմանված պահանջներին,

դ. կառուցվող ճանապարհի եռաչափ մոդելավորմամբ տեսաֆիլմը ևս մեկ անգամ ցուցադրել խորհրդի անդամներին՝ միաժամանակ ներկայացնելով միջազգային մասնագետների կարծիքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ, ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ